ՀՏԴ-726.5 (479.25) ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՃԱՐՏՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Արման Ժիրայրի Թորոսյան

Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարան,
«Երևաննախագիծ» ՓԲԸ, ք.Երևան, ՀՀ
arman.m.torosyan@gmail.com

Ներկայացված են Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների ճարտարապետական առանձնահատկությունները: Հավաքագրվել են հետազոտվող կառույցների արխիվային, գիտական, լուսանկարչական և չափագրական նյութերը: Կատարվել են քննվող կառույցների համալիր, հորինվածքային, կառուցվածքային և գեղարվեստական արտահայտչական վերլուծություններ, ինչպես նաև տիպաբանական դասակարգում: Վերլուծություններն ամփոփվել են աղյուսակների տեսքով և ներկայացվել գծապատկերի տեսքով: Կատարվել են համապատասխան եզրակացություններ, ինչպես նաև ներկայացվել է Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների տեղադրական քարտեզը:

Առանցքային բառեր. *Կոտայքի մարզ, եկեղեցի, մատուռ, ճարտարապետություն, հորինվածքային տիպաբանական դասակարգում, տեղադրական քարտեզ*

Ներածություն

Հետխորհրդային Հայաստանում կառուցվել, կառուցվում կամ նախագծման փուլում են գտնվում բազմաթիվ եկեղեցիներ, որոնք փոքր բացառությամբ կերպավորում են միջնադարյան նույնատիպ կառույցները, նմանակելով կամ կրկնելով դրանց հորինվածքը և ճարտարապետական-գեղարվեստական լուծումները: Եկեղեցական ճարտարապետությունը Հայաստանում շարունակում է զարգանալ նույն՝ վաղ միջնադարից մինչ ուշ միջնադար ձգվող ճարտարապետական կերպարի մեջ: Անկախության տարիների եկեղեցիները կառուցվել են, առաջնորդվելով անցյալի գեղարվեստական չափանիշներով, ձևերի և հորինվածքների վերակենդանացմամբ: Եկեղեցին որպես նյութական և հոգևոր արժեք այսօր փոփոխության է ենթարկվել: Փոխվել են նրա հանդեպ թե՛ պահանջը, թե՛ դերը և թե՛ հասարակության մոտեցումն ու ավանդական ծիսակարգի պայմանները: Ընդլայնվել է եկեղեցիների դերը (հոգևոր դասախոսություններ, երաժշտության ունկնդրում, ցուցահանդեսների, հարսանյաց հանդեսների կազմակերպում), որն առաջադրում է նոր պայմաններ և ենթադրում նորովի մոտեցումներ: Բացակայում են նախագծման պետականորեն հաստատված նորմերը, ինչպես նաև գիտական շրջանառության մեջ սակավաթիվ են թեման արծածող ամփոփ հրատակություններն ու աշխատությունները:

Մեթոդաբանություն

Ուսումնասիրության մեթոդը գրականության, արխիվային, նախագծային, լուսանկարչական, բնապայման հետազոտական, չափագրական նյութերի հավաքագրումն վերլուծությունն է: Մարզի՝ ընդհանուր թվով 22 նորակառույց եկեղեցիներն ու մատուռներն ուսումնասիրվել են ըստ հորինվածքի, կառուցվածքի, համալիրի կազմի, և գեղարվեստական արտահայտչականության:

Գիտական նորույթ

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում հետխորհրդային Հայաստանի Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների ամփոփ նյութերը, որոնք կարող են հիմք հանդիսանալ նաև հետագա ուսումնասիրությունների համար: Բացահայտվել են խնդրո առարկա կառույցների հորինվածքային և կառուցվածքային առանձնահատկությունները, ինչի արդյունքում հնարավոր է դարձել առաջարկել դրանց տիպաբանական դասակարգումը:

Բովանդակություն

Կազմվել է Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների ու մատուռների ամբողջական ցանկը, որ ստորև ներկայացվում է (աղ. 1).

Աղյուսակ 1

Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների անվանացանկը, գտնվելու վայրը, կառուցման տարեթիվը և հեղինակ ճարտարապետը

№	Եկեղեցու անվանումը	Բնակավայր	Կառ. տ/թ	ճարտարապետ
1.	ս. Ամենափրկիչ	Չարենցավան	2000	-
2.	ս. Հարություն	Նուռնուս	2001	-
3.	ս. Աստվածածին	Առինջ	2002	-
4.	Սրբոց Նահատակաց	Թեղենիք	2003	-
5.	Թուխ Մանուկ	Ջրառատ	2003	-
6.	ս. Հովհաննես Մկրտիչ	Աբովյան	2013	Ա. Ղուլյան
7.	ս. Գևորգ	Վանատուր	2013	Ա. Վիրաբյան
8.	ս. Ամենափրկիչ	Նոր Հաճըն	2015	Ա. Ղուլյան
9.	ս. Խաչ	Գառնի	2015	-
10.	ս. Հովհաննես	Նոր Գեղի	-	-
11.	ս. Սարգիս	Եղվարդ	-	Հ. Գասպարյան
12.	ս. Մարիամ Աստվածածին	Բյուրեղավան	2013	-
13.	ս. Աստվածածին	Ջրաբեր	-	-
14.	ս. Հովվի (մ.)	Վանատուր	2000	Թ. Թորամանյան
15.	ս. Խաչ (մ.)	Պտղնի	2005	-
16.	ս. Նարեկ (մ.)	Կոտայք	2006	-
17.	ս. Գրիգոր Լուսավորիչ (մ.)	Զառ	2008	-
18.	ս. Աստվածածին (մ.)	Ջորաղբյուր	2010	-
19.	ս. Վառվառա (մ.)	Բալահովիտ	-	-
20.	ս. Թուխ Մանուկ (մ.)	Արգել	-	-
21.	ս. Վարդան (մ.)	Բյուրեղավան	2000	-
22.	Ծառուկյանների ընտանեկան-դամբարան	Աբովյան	-	Ա. Ղուլյան

Ներկայացվում է նույն կառույցների քանակական գծապատկերը (նկ. 1):



Նկ. 1. Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների և մատուռների քանակական գծապատկեր

Մշակվել և ներկայացվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների տեղադրական քարտեզը (նկ. 2):



Նկ. 2. Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների տեղադրական քարտեզ

Անկախության տարիներից հետո Կոտայքի մարզում կառուցվել են 13 եկեղեցի, 8 մատուռ, 1 ընտանեկան-դամբարան [1]: Հավաքագրվել են արխիվային նյութերը, գրականությունը, չափագրությունները, լուսանկարները և այլ նյութեր, ինչի շնորհիվ հնարավոր է դարձել ուսումնասիրել և վերլուծել խնդրո առարկա կառույցների ճարտարապետական առանձնահատկությունները:

Առինջ գյուղի Սուրբ Աստվածածին եկեղեցին (նկ. 3) պատկանում է Կոտայքի թեմին և գտնվում է Առինջ գյուղում՝ Գ. Ծառուկյանի պատկանող մասնավոր տարածքում: Կառույցի միակ մուտքը գտնվում է արևմտյան մասում և շեշտված է երկու սյուների վրա հենված երկլանջ

նախամուտքով: Արևելյան մասում է գտնվում ավագ խորանը, աջ և ձախ կողմերում՝ ավանդատները: Հյուսիսում մկտրության ավազանն է, մոմավաճառի և մոմավառության սեղանները: Գմբեթատակ քառակուսուց անցումը իրականացված է առագաստների միջոցով: Թմբուկի 12 նիստերից չորսում առկա են հարդարված շրջանակների մեջ վերցված պատուհաններ, իսկ մնացած 8 նիստերում պատուհանների բացվածքներին համապատասխան չափերով խորշեր են, որոնք ևս վերցված են զարդանախշ շրջանակների մեջ: Երկլանջ գավիթ-նախամուտքի վրա կանգնեցված է ռոտոնդավոր 12 նիստանի գմբեթը: Եկեղեցու տարածքում կանգեցված են խաչքարեր:

Նկ. 3. Առինջի Ս Աստվածածին եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից

Բյուրեղավանի Ս Վարդան եկեղեցու հատակագիծն ուղղանկյուն է, արևմուտքից ունի շքամուտք, որը ինչպես եկեղեցին, եկլանջ տանիքով է, ծածկված քարի սալերով: Ճակատները լուծված են պարզ, միայն արևմտյան ճակատը զարդարում է խաչաձև զարդաքանդակը: Կառույցի ծավալատարածական հորինվածքը հարստացնում է քառասյուն ռոտոնդան: Այս եկեղեցին հատկանշական է նրանով, որ այստեղ խորան գոյություն չունի. դրա փոխարեն ներսում արևմտյան պատը ձևավորված է որպես խորան: Իրականացված է «որմնախորշ», որտեղ տեղադրված է Մարիամ Աստվածածնի բարձրաքանդակը մանուկ Հիսուսը գրկին: Ներսույթում՝ հարավային պատին, առկա է արձանագրություն: Եկեղեցին կառուցված է միաձույլ երկաթբետոնով, երեսապատված է կարմավուն տուֆով: Տանիքի ծածկասալերը շարված են դասական եղանակով: Տարածքը սալապատված է բազալտով: Եկեղեցու հարավային կողմում կանգնեցված է խաչքար՝ պատրաստված ծիրանագույն տուֆով (նկ. 4):

Նկ. 4. Բյուրեղավանի Ս Վարդան մատուռի տեսքը հյուսիս-արևմուտքից

Չարենցավանի Ս Փրկիչ եկեղեցին հատակագծում ուղղանկյունաձև է: Ունի երկլանջ տանիք, իրականացված է միաձույլ բետոնից և երեսապատված է ծիրանագույն տուֆով: Նախամուտքի տանիքում առկա է կաթողիկե: Գլխավոր՝ արևմտյան մուտքի բարավորի վրա առկա է ս. Խաչի քանդակն ու արձանագրություն՝ եկեղեցու կառուցման վերաբերյալ: Ընդարձակ ներսույթի արևելյան հատվածում տեղադրված են ավագ խորանն ու երկու ավանդատները: Արևմտյան երկու ավանդատներից հյուսիսայինն օգտագործվում է մոմավաճառության համար, իսկ հարավայինը՝ մոմավառության: Հյուսիսային մասում է գտնվում մկրտության ավազանը: Եկեղեցու բակում առկա են խաչքարեր (նկ. 5):

Նկ. 5. Չարենցավանի Ս Փրկիչ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից

Նոր Հաճընի Ս Ամենափրկիչ եկեղեցու կառույցը բարդ ծավալների գեղագիտական համակցություն է: Այն հիմքում սկսվում է խորանարդ ծավալից, փոխակերպվում ութանիստի,

ամբողջանում գեղատեսիլ թմբուկով և հովհարաձև վեղարով: Ծավալատարածական հորինվածքը մտածված է այնպես, որ բոլոր ճակատները միահյուսված են և բոլորը միասին կազմում են անքակտելի միասնություն: Նույնիսկ զանգակատունը, որը հարում է հիմնական կառույցին արևմուտքից, հորինվածքի ամբողջության բաղադրիչն է կազմում: Հեղինակ-ճարտարապետ Ա. Ղուլյանը մեծ սիրով է դրվատել զարդաքանդակները, ձևավոր տարրերը: Նա ոգեշնչվել է հայկական դասական ճարտարապետության հորինվածքային և առանձին զարդարվեստի նմուշներով և այն մեծ վարպետությամբ մեկնաբանել է ժամանակակից լեզվով իր աշխատանքներում ընդհանրապես, մասնավորապես Նոր Հաճըն քաղաքի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու ճարտարապետության մեջ: Սակայն մեր կարծիքով հեղինակը տուրք է տվել զարդաքանդակների առատությանն ի տարբերություն հայկական դասական, պարզ ճարտարապետությանը: Երբեմն այդ զանդաքանդակների առատությունը ուշադրությունը շեղում է բուն հրինվածքն ընկալելուց: Ի տարբերություն այլ ժամանակակից եկեղեցիների, այստեղ տանիքածածկի համար օգտագործված է մետաղ և կիրառված է վիտրաժային պատուհաններ: Միաձույլ երկաթբետոնե կառույցն երեսապատված է վարդագույն տուֆով (նկ. 6):



Նկ. 6. Նոր Հաճնի Ս Ամենափրկիչ եկեղեցու տեսքը հարավ-արևմուտքից

Գառնու հեթանոսական տաճարից ոչ հեռու գտնվող *Սուրբ Խաչ* հայկական առաքելական եկեղեցու շինարարական աշխատանքները սկսվել են 2000թ. և ավարտվել 2007-ին: Փոքր չափերով կենտրոնագմբեթ այս եկեղեցին երեսապատված է վարդագույն և սև գույների տուֆով: Դեպի արևմուտք ձգված երկու սյուների վրա կանգնած երկլանջ տանիքով շեշտված է նախամուտքը: Միակ՝ արևմտյան մուտքի բարավորի վրա առկա է զարդաքանդակ խաչի տեսքով: Խորանը տեղադրված է արևելյան հատվածում, մկրտության ավազանը և մոմավառության սեղանը՝ հյուսիսայինում: Մոմավառության համար առկա է նաև մեկ այլ երկլանջ շինություն եկեղեցու ետնամասում, որը նման է նաև բաց խորանի: Գմբեթատակ քառակուսու անցումն իրականացված է առագաստների միջոցով, որն արտաքինից արտահայտվում է պատվանդաններով: Ներքուստ կլոր, սակայն արտաքուստ ութանիստ

թմբուկն ունի չորս պատուհաններ, սրանք էլ իրենց հերթին շրջապատված են զարդաքանդակներով լի շրջանակներով: Գմբեթը և խաչթևերի երկլանջ տանիքները, ինչպես նաև զանգակատան երկլանջ տանիքը ծածկված են քարե սալերով (նկ. 7):

Նկ. 7. Գառնիի Ս Խաչ եկեղեցու տեսքը արևմուտքից

Հորինվածքային վերլուծությունը կատարվել է ըստ ավագ խորանի ձևի, ավանդատների և մուտքերի դիրքի (աղ. 2):

Աղյուսակ 2

Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների հորինվածքային վերլուծություն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ՀՈՐԻՆՎԱԾՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ													
№	ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՏՆՎ. ՎԱՅՐԸ	ԿԱՌ. Տ/Թ	ԱՎԱԳ ԽՈՐԱՆԻ ՁԵՎԸ			ԱՎԱՆԴԱՏԱՆ ԴԻՐՔԸ				ՄՈՒՏՔԵՐԻ ԴԻՐՔԸ		
				ուղղ.	կլոր	այլ	հյուսիս	հարավ	հյուսիս-հարավ	արևելք-արևմտք	արևմտք	հյուսիս	հարավ
1.	ս. Ամենափրկիչ	Չարենցավան	2000										
2.	ս. Հարություն	Նուռնուս	2001										
3.	ս. Աստվածածին	Առինջ	2002										
4.	Սրբոց Նահատակաց	Թեղենիք	2003										
5.	ս. Թուխ Մանուկ	Ջրառատ	2003										
6.	ս. Հովհաննես Մկրտիչ	Աբովյան	2013										
7.	ս. Գևորգ	Վանաստուր	2013										
8.	ս. Ամենափրկիչ	Նոր Հաճըն	2015										
9.	ս. Խաչ	Գառնի	2015										
10.	ս. Հովհաննես	Նոր Գեղի	-										
11.	ս. Մարգիս	Եղվարդ	-										
12.	ս. Մարիամ Աստվածածին	Բյուրեղավան	2013										
13.	ս. Վարդան (մատուռ)	Բյուրեղավան	2000										
14.	ս. Հովվի (մատուռ)	Վանաստուր	2000										
15.	ս. Խաչ (մատուռ)	Պտղնի	2005										
16.	ս. Նարեկ (մատուռ)	Կոտայք	2006										
17.	ս. Գրիգոր Լուսավորիչ (մատուռ)	Ջառ	2008										
18.	ս. Աստվածածին (մատուռ)	Զորաղբյուր	2010										
19.	ս. Վարվառա մատուռ	Բալահովիտ	-										
20.	Ծառուկյանների ընտանեկան-դամբարան	Աբովյան	-										
21.	ս. Աստվածածին	Ջրաբեր	-										
22.	ս. Թուխ Մանուկ մատուռ	Արգել	-										

Կառուցվածքային վերլուծությունը կատարվել է ըստ ծածկի, թմբուկի և վեղարի ձևերի, պատվանդանի (տումբայի) և ռոտոնդայի առկայության (աղ. 3):

Աղյուսակ 3

Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների կառուցվածքային վերլուծություն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ																
№	ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՏՆՎ. ՎԱՅՐԸ	ԿԱՌ. Տ/Թ	ԾԱԾԿԻ ՁԵՎԸ			ԹՄԲՈՒԿԻ ՁԵՎԸ		ՎԵՂԱՐԻ ՁԵՎԸ			ՏՈՒՄԲԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ		ՌՈՏՈՆԴԱՅԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ	
				միալանջ	երկլանջ	գմբեթ	գլան.	նիստ.	հովի.	նիստ.	կոն.	առկա է	առկա չէ	առկա է	առկա չէ
1.	ս. Ամենափրկիչ	Չարենցավան	2000												
2.	ս. Հարություն	Նուռնուս	2001												
3.	ս. Աստվածածին	Առինջ	2002												
4.	Սրբոց Նահատակաց	Թեղենիք	2003												
5.	ս. Թուխ Մանուկ	Ջրառատ	2003												
6.	ս. Հովհաննես Մկրտիչ	Աբովյան	2013												
7.	ս. Գևորգ	Վանաստուր	2013												
8.	ս. Ամենափրկիչ	Նոր Հաճըն	2015												
9.	ս. Խաչ	Գառնի	2015												
10.	ս. Հովհաննես	Նոր Գեղի	-												
11.	ս. Սարգիս	Եղվարդ	-												
12.	ս. Մարիամ Աստվածածին	Բյուրեղավան	2013												
13.	ս. Վարդան (մատուռ)	Բյուրեղավան	2000												
14.	ս. Հովվի (մատուռ)	Վանաստուր	2000												
15.	ս. Խաչ (մատուռ)	Պտղնի	2005												
16.	ս. Նարեկ (մատուռ)	Կոտայք	2006												
17.	ս. Գրիգոր Լուսավորիչ (մ.)	Ջառ	2008												
18.	ս. Աստվածածին (մատուռ)	Ձորաղբյուր	2010												
19.	ս. Վառվառա մատուռ	Բալահովիտ	-												
20.	Ծառուկյանների ընտանեկան-դամբարան	Աբովյան	-												
21.	ս. Աստվածածին	Ջրաբեր	-												
22.	ս. Թուխ Մանուկ մատուռ	Արգել	-												

Համալիր վերլուծությունը կատարվել է ըստ զանգակատան և խաչքարերի առկայության (աղ. 4):

Աղյուսակ 4

Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների համալիրի վերլուծություն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ՀԱՄԱԼԻՐՆԵՐԻ ԿԱԶՄԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ							
№	ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՏՆՎ. ՎԱՅՐԸ	ԿԱՌ. Տ/Թ	ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆ		ԽԱՉՔԱՐ	
				առկա է	առկա չէ	առկա է	առկա չէ
1.	ս. Ամենափրկիչ	Չարենցավան	2000				
2.	ս. Հարություն	Նուռնուս	2001				
3.	ս. Աստվածածին	Առինջ	2002				
4.	Սրբոց Նահատակաց	Թեղենիք	2003				
5.	ս. Թուխ Մանուկ	Ջրառատ	2003				
6.	ս. Հովհաննես Մկրտիչ	Աբովյան	2013				
7.	ս. Գևորգ	Վանաստուր	2013				
8.	ս. Ամենափրկիչ	Նոր Հաճըն	2015				
9.	ս. Խաչ	Գառնի	2015				
10.	ս. Հովհաննես	Նոր Գեղի	-				
11.	ս. Սարգիս	Եղվարդ	-				
12.	ս. Մարիամ Աստվածածին	Բյուրեղավան	2013				
13.	ս. Վարդան (մատուռ)	Բյուրեղավան	2000				
14.	ս. Հովվի (մատուռ)	Վանաստուր	2000				
15.	ս. Խաչ (մատուռ)	Պտղնի	2005				
16.	ս. Նարեկ (մատուռ)	Կոտայք	2006				
17.	ս. Գրիգոր Լուսավորիչ (մատուռ)	Ջառ	2008				
18.	ս. Աստվածածին (մատուռ)	Ձորաղբյուր	2010				
19.	ս. Վառվառա մատուռ	Բալահովիտ	-				
20.	Ծառուկյանների ընտանեկան-դամբարան	Աբովյան	-				
21.	ս. Աստվածածին	Ջրաբեր	-				
22.	ս. Թուխ Մանուկ մատուռ	Արգել	-				

Գեղարվեստա-արտահայտչական վերլուծությունը կարատավել է ըստ շքամուտքի, քիվի, պսակի, արձանագրության, որմնանկարի և զարդաքանդակի առկայության (աղ. 5):

Աղյուսակ 5

Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների գեղարվեստա-արտահայտչական վերլուծություն

ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՆՈՐԱԿԱՌՈՒՅՑ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԳԵՂԱՐՎԵՍՏԱ-ԱՐՏԱՀԱՅՏԱՀԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ									
№	ԵԿԵՂԵՑՈՒ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ԳՏՆՎ. ՎԱՅՐԸ	ԿԱՌ. Տ/Թ	ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ					
				շքամուտք	քիվ	պսակ	արձանագրություն	որմնանկար	զարդաքանդակ
1.	ս. Ամենափրկիչ	Չարենցավան	2000						
2.	ս. Հարություն	Նուռնուս	2001						
3.	ս. Աստվածածին	Առինջ	2002						
4.	Սրբոց Նահատակաց	Թեղենիք	2003						
5.	ս. Թուխ Մանուկ	Ջրառատ	2003						
6.	ս. Հովհաննես Մկրտիչ	Աբովյան	2013						
7.	ս. Գևորգ	Վանաստուր	2013						
8.	ս. Ամենափրկիչ	Նոր Հաճրն	2015						
9.	ս. Խաչ	Գառնի	2015						
10.	ս. Հովհաննես	Նոր Գեղի	-						
11.	ս. Սարգիս	Եղվարդ	-						
12.	ս. Մարիամ Աստվածածին	Բյուրեղավան	2013						
13.	ս. Վարդան (մատուռ)	Բյուրեղավան	2000						
14.	ս. Հովվի (մատուռ)	Վանաստուր	2000						
15.	ս. Խաչ (մատուռ)	Պտղնի	2005						
16.	ս. Նարեկ (մատուռ)	Կոտայք	2006						
17.	ս. Գրիգոր Լուսավորիչ (մատուռ)	Ջաո	2008						
18.	ս. Աստվածածին (մատուռ)	Զորաղբյուր	2010						
19.	ս. Վառվառա մատուռ	Բալահովիտ	-						
20.	Ծառուկյանների ընտանեկան-դամբարան	Աբովյան	-						
21.	ս. Աստվածածին	Ջրաբեր	-						
22.	ս. Թուխ Մանուկ մատուռ	Արգել	-						

Մարզի նորակառույց եկեղեցիների ուսումնասիրության արդյունքում կատարված հորինվածքային տիպաբանական դասակարգումը (նկ. 8):



Նկ. 8. Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների և մատուռների հորինվածքային տիպաբանական դասակարգման գծապատկեր

Եզրակացություններ

Կոտայքի մարզի նորակառույց եկեղեցիների և մատուռների վերլուծություններից բացահայտվել է, որ.

- Կոտայքի մարզի Գառնի գյուղում գտնվող ս. Խաչ եկեղեցու առանձնահատկությունը՝ դա մոմավառության սրահի անջատ լինելն է,
- մարզում առկա է գործառույթային առանձնահատկություն ունեցող ս. Նարեկ մատուռը, որը կառուցվել է առանձնատան բակում,
- ի տարբերություն միջնադարյանի, որտեղ գերեզմանատներում կառուցվում էին միայն մատուռներ, այս մարզի Հրազդան քաղաքի գերեզմանատանը կառուցվել է եկեղեցի՝ Թուխ Մանուկ,
- Կոտայքի մարզում առկա է նաև ևս մեկ յուրահատուկ շինություն՝ ընտանեկան-դամբարան եկեղեցի, որն իրենից ներկայացնում զվարթնոցատիպ կենտրոնագմբեթ տիպի շինություն:

АРХИТЕКТУРА НОВОПОСТРОЕННЫХ ЦЕРКВЕЙ КОТАЙКСКОГО МАРЗА

Арман Жирайрович Торосян

Национальный университет архитектуры и строительства Армении,
ЗАО «Ереванпроект», г.Ереван, РА
arman.m.torosyan@gmail.com

В статье представлены архитектурные особенности новопостроенных церквей в Котайкском марзе Республики Армения. Были собраны архивные, научные, фотографические и обмерные материалы исследуемых строений. Были сделаны комплексный композиционный, структурный анализ, а также анализ художественной выразительности исследуемых структур, наряду с типологической классификацией. Полученные путем анализа данные были обобщены в таблицах и представлены в виде диаграмм. Были сделаны соответствующие выводы, а также представлена карта расположения вновь построенных церквей в Котайкском марзе.

Ключевые слова: *Котайкский марз, церковь, часовня, архитектура, композиционная типологическая классификация, карта расположения*

ARCHITECTURE OF THE NEWLY BUILT CHURCHES IN KOTAYQ MARZ

Arman Zhirayr Torosyan

National University of Architecture and Construction of Armenia, "Yerevanproject" CJSC, Yerevan, RA
arman.m.torosyan@gmail.com

Architectural peculiarities of newly built churches of Kotayk marz of the Republic of Armenia are given. The archives, scientific, photographic, and measurement materials of the researched buildings have been collected. The complex, compositional, structural and artistic-expressive analyzes of the studied buildings, as well as the typological classification, have been made. Analyzes were summarized in tables and

presented in the form of a chart. Relevant conclusions have been made, as well as the map of newly constructed churches in Kotayk marz has been presented.
Keywords: *Kotayk marz, church, chapel, architecture, compositional typological classification, location map*

Գրականություն

1. **Մարտիրոսյան Մ., Սարուխանյան Վ.** Կոտայքի նոր եկեղեցիները. Գագիկ Ծառուկյանից մինչև Գագիկ Խաչատրյան. - Available at: http://hetq.am/arm/news/71613/kotayqi-nor-ekexecinery-gagik-tsarukyanic-minchev-gagik-khachatryan.html (13.10.2016):

References

1. Martirosyan, M., Sarukhanyan, V. (13.10.2016), *Kotayqi nor ekeghecinery. Gagik Carukyanic minchev Gagik Khachatryan [New churches in Kotayq province: Gagik Tsarukyan to Gagik Khachatryan]*. Available at: http://hetq.am/arm/news/71613/kotayqi-nor-ekexecinery-gagik-tsarukyanic-minchev-gagik-khachatryan.html.

Թորոսյան Արման Ժիրայրի *(ՀՀ, ք. Երևան) – ՃՇՀԱՀ, ՃՏՊՃԺՎԳԱ և Պ ամբիոն, ասիստենտ, «Երևաննախագիծ» ՓԲԸ, (+374) 41699939. arman.m.torosyan@gmail.com*
Торосян Арман Жирайрович *(РА, г. Ереван) – НУАСА, кафедра Теории архитектуры, реставрации и реконструкции историко-архитектурного наследия, изящных искусств и истории, ассистент, "Ереванпроект" ЗАО, (+374) 41699939, arman.m.torosyan@gmail.com*
Torosyan Arman Zhirayr *(RA, Yerevan) – NUACA, chair of THARRHM & H, assistant, "Yerevanproject" CJSC, (+374) 41699939, arman.m.torosyan@gmail.com*

Ներկայացվել է՝ 09.07.2018թ.
Ընդունվել է տպագրության՝ 11.09.2018թ.